

ի նոյն, Ա. 8, 9:

Եւ ՚ի Գործս առաքելոց ՚ի դէ. ժ. հս. 33 ատէ, « ԶՅիսուս՝ որ ՚ի Նազարեթէ, զոր էօժ Աստուած հոգւով Սրբով և զօրութեամբ:

Եւ ՚ի Յովհաննու ատէ. « Զի զոր Աստուած առաքեաց, զլանան Աստուծոյ խօսի. զի ոչ եթէ չարիով տայ Աստուած զհոգին՝ Հայր սիրէ զՍրբի, և զամենայն ինչ ետ ՚ի ձեռս նորա»: Գ. 34, 45:


Յայսմ ամենայնի յայսնապէս նը կարագրի թագաւորութիւն եւ քահանայութիւն Քրիստոսի յաւիտեան: Ըստ այսմ է եւ բան սրբազան հօրն Պօսուէի յասին իւրում. « Յառաջագոյն ետես զնա Վաւիթ՝ եւ երգեսց զնա գեղապանձ և անհամեմատ օրինակաւ: Բազում անգամ միտ եղեալ զիսուս որդւոյ իւրոյ Սողոմոնի հօջալել, ահտ անգէն նորա հայր հոգւովն, և ՚ի հիացման եղեալ՝ տեսանէր զամն գերագոյն փառօք և իմաստութեամբ քան զՍողոմոն: Տեսանէր զՄեոսիոյն բաղձեալ յաթոռ հաստատութեան առաւել քան զարեւ և զուսին: Տեսանէր իմաստահալ առ սաիւք նորա զամենայն ազգս, եւ զամենեկին օրհնեալ ըստ խոստմանն եղելոց առ Աբրահամ: Եւ ՚ի վեր ևս կորոզութեամբ կռեալ զմիտս՝ տեսանէր զնա ՚ի վաշերութիւն սրբոց յառաջ քան զարուեսակ ճնանելով յաւիտեանից ՚ի ծոցոյ հօր իւրոց, քահանայապետ մշտն ջննաւոր, որում ոչ այլ որ յաջորդէ. և ոչ ինքն ումեք յաջորդեալ. անցեալ նստի քահանայապետ ոչ ըստ կարգին Ահարօնի, այլ ըստ կարգին Մէլքիսեկի, կարգ նորահրաշ անձանօթ օրինաց անտի: Տեսանէր զնա նստեալ ընդ աջմէ Աստուծոյ, հայելով ՚ի բարձանց երկնից, արիւեալ առ պատուան դանօք ստիցն զթշնամիս իւր:

Հիացեալ Վաւիթի ընդ չքնաղ տեսարանն, այլ յայլմէ լինի ՚ի փառաց որդւոյն. և Տէր իւր կոչէ զնա ՚ի: Ա. հասար, երես. 317:

Աւթերորդ՝ են և այլ և այլ նկարագրութիւնք երեւելի հանգամանաց անձին Քրիստոսի, զորս Վաւիթ յընձարով երգէ յեթթանասուն և միերորդ գումսաղմասարանի իւրում թէ. « Աստուած զիրաւունս քո արքայի սուր, և զարգարութիւն քո որդւոյ թագաւորի»: և այլն որ զինի, համար 1-20:

Արդ՝ զնկարագրական ժարգարէ, շի Վաւիթ ոչ կարէաք իմանալ. եթէ էին այնք խօսեցեալ վասն Քրիստոսի Փրկչին մերոց, քանզի իբազումս յայնցանէ երեւի զն Վաւիթ նկարագրեալ է ՚ի դէմս իւր կամ որդւոյ իւրոյ Սողոմոնի, եթէ Քրիստոս ինքն, առաքեալք նորա և վարդապետք եկեղեցւոյ ոչ էին վըկայեալ զայնցանէ նշանակեալ ՚ի Քրիստոս. մանաւանդ զի եւ զբազումս յայնցանէ առեալ էին Հրէայք վասն գալստեան Մեոսիոյն և թագաւորելոյ նորա որ ՚ի հարց անտի նոցա ալլիսկաղիւր, մանաւանդ ՚ի ժամանակին յոր ճնաւ Յիսուս, վասնորոց չը կարէ որ տալ զայնս Վաւիթի, կամ որդւոյ իւրոյ Սողոմոնի:

(Շարունակելի):



Հ Ա Ւ Ա Տ Ք Ե Ի Յ Ո Յ Ս

Ո՛հ, ինչպէս մարտի և Աստուծոյ արժանի առանց դարձուածոց սրտի նախըմբ ՅԻՆԵԼՈՆ

Արդ վախոյւր զմեզ քու Աստուծմէդ, ըսէ տղան թէ վախնայ իր հօր վրէժմնդրութենէն, հայր մը վրէժ չը ինդրէր՝ այլ կը պատժէ. իր բարկութիւնը՝ իր սուած հարուածոյն պէս

արագ է, իր սէրը միայն յաւիտենա-
կան: Առաջին պատուիրանը չէ. «Յը-
կիր ՚ի Տեառնէ մինչեւ ցտտկուսն եւ
ցարհաւիրս» այլ «Սիրեցես զՏէր
Աստուած քո յամենայն սրտէ քուսով»: Անգութեանը կը թողում անգութ
կարծիքը, և իմ բնութենէս ծնունդ ա-
ռած չարեաց ծանրութեան տակ ըն-
թանալով կը դիմեմ առ այն որ ըսաւ.
«Յկայք առ իս ամենայն աշխատեալք
և բեռնաւորք և ես հանդուցից զձեզ»: Արեւներուն Աստուածն, մարդոց Ա-
բարիքը, թշուառաց ապաւէնը մարդ-
կոյնն աղգին բռնակալ չէ:

Աստուած իմ, Հայր իմ, ընդունէ
այս հոգին որ խաւարի ծոցէն առ քեզ
բարձրացաւ, այս միտքը որ քո ըյտդ
կը փնտաէր, այս խորհուրդը որ կը
փափաքէր զքեզ բմբունելու, և այս սիր-
տը որ կը համարձակէր զքեզ սիրելու.
դուն զիս չը պիտի պատժես ճշմար-
տութիւնը փնտաելուս համար, զիս
չը պիտի պատժես քո բարի ըլլալը հա-
հաւատարուս համար, երբ բնութեան
մէջ համայն տարերք քոյդ բարութեան
վրայ կը խօսին:

Ինչպէս պիտի կարենամ հաւա-
տալ քոյդ յաւիտենական վրէժխնդ-
րութեան, երբ կը տեսնեմ որ Արեւը
իմ գլխուս վրայ կը փայլի, դաշտերը
հունձքերով կը ծածկին. և քոյդ աջը
իմ առջեւ կը սփռէ այն գանձերը, ո-
րոց անարժան էի. ինչ որ մեզոցս մէջ
ինձ չուղեցիր՝ երկրաբարչ կիրքերէն
հեռանալուս աստէն յինէն պիտի զու-
նան. մեղապարտ էի և ինձ պարգե-
ցիր անհուն վայելութիւններ, տկար
էի և չուառ և դուն յիս ներշնչեցիր
գերբնական զգացում մի որ զիս առ-
քեզ կը կոչէր: Չար մարդիկ զքեզ ի-
րենց պէս չար ըրին, դժ խք, սպա-
շուանք, քաւութիւն դատապարտու-
թիւն աղաղակեցին, ես աննոց խօս-

քերուն շատ հաւատք չէի ընծայեր.
բայց նմ Աստուած իմ, ՚ի քեզ պ պի-
տի հաւատք ընծայեցի:

Ինձ կրակին թէ դուն ստակալ ես,
բնութիւնը ինձ կրակը որ դուն բա-
րերար ես, իմ սրտիս ձայն և խղճիս
նախազգացումը ինձ կրակին որ դուն
ողորմած ես և զթած. աննք զքեզ
սակաւներուն Աստուած կը կոչէին,
և օրուան ասող, որ իր լոյսը և արգա-
տաւորութիւնը իր շուրջ դարձող բը-
սան ինն աշխարհաց վրայ կը հեղու,
ինձ կրակին թէ դուն տիեզերաց Աս-
տուածն ես: Քո թագաւորութեանդ
սահմանը անձուկ կը գծէին, ես չեմ
կրնար ոչ սահմանը բմբունել եւ ոչ
փոխձանը մտածել: Քո պատուէրներն,
նմ իմ Աստուած, վրէժխնդրութիւնն
կը նզովեն, դուն վրէժ պիտի լուծես:

Խեղճ մահկանացուի մը հրաման
կրնեն իր թշնամիները սիրելու, զքեզ
արհամարհող որդը պիտի ջախջախես,
իմ մտացս անկարողութենէն և հան-
ճարոյս ունայնութենէն առ իմ առնե-
լով զիս մշտնջենաւորապէս պիտի պատ-
ժես: Ինչպէս կատարելութիւնը սը-
կարութեան անաչառ պիտի ըլլայ, ինչ
պէս բարութիւնն զջման անողք պի-
տի ըլլայ, մեծ վայելութիւնն աշխար-
հիս փլատակաց վրայ դժոխք և տան-
ջանք պիտի չուայէ, յորս բարութեան
միայն կը հանդիպիմ:

Ինձ Մարիէն թորգ.
Զար Մ. Համբարձոմեան,
Ուրբանուր: յերոսուղէմ:

